ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐԳԵՎ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ

ՀԱՐՑ— Վերջերս մի քանի անգամ Արցախ այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատվիրակություններ: Ո՞րն էր Ղարաբաղում գտնվելու ձեր նպատակը:

ՊԱՏԱՍԽԱՆ— Նախ ես ողջունում եմ արցախահայությանը և շնորհավորում իրենց այն առիթով, որ Արցախահայոց աշխարհում արդեն առնդժվում է Արցախի թեմ, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ես եկա այստեղ տեսնելու, թե ինչպիսի վիճակում են գտնվում մեր եկեղեցիները, ինչ պետք է անել նորոգությունների համար, անհրաժեշտ պայմաններ ենք ստեղծում, որպեսզի հոգևորականներ գան այստեղ և սկսեն ծառայել գործող եկեղեցիներում: Այսինքն, մի տեսակ նախապատրաստական աշխատանք ենք կատարում, որպեսզի կրոնական կյանքը արդեն արթնանա և գործի Արցախ աշխարհում:

Վեհափառ Հայրապետի ցանկությամբ ես առայժմ նշանակված եմ այստեղ՝ իբրև եպիսկոպոս և տեսուչ, մինչև Աստված կամենա, երբ Արցախ աշխարհում պաշտոնապես հաստատվի հայ եկեղեցու թեմ, միգուցե ինձ էլ պատիվ ընծայվի լինել թեմի առաջնորդ:

ՀԱՐՑ— Առայժմ, երբ եկեղեցիները ու վանքերը պատրաստ չեն, այսպես ասած, կատարել իրենց դերը, նպատակահարմար չե՞ք գտնում հոգևորականներ ուղարկել Արցախի գյուղերն ու մանավանդ, Ստեփանակերտ՝ ժողովրդի մեջ աղոթելու և քարոզելու համար:

ՊԱՏԱՍԽԱՆ— Ճիշտ է, եկեղեցիները դեռ այնքան էլ բարեկարգ վիճակում չեն գտնվում և կարիք ունեն նորոգումների, բայց քանի որ մեր արցախահայությունը կարոտ ունի հոգևորականի, աղոթքի, զանգի ձայնի և ժամերի, բավարարելով արցախահայության ցանկություններին, դեռ չքարանորոգված վիճակում գտնվող եկեղեցիները մենք մի քանի վարդապետ, քահանա պիտի ուղարկենք, որպեսզի սկսեն արդեն կրոնական կյանքը:

ՀԱՐՑ— Վերջերս Արցախում ստեղծվեց «Ամարաս» հայկական բարեգործական ընկերությունը: Ինչպե՞ս եք դուք, որպես Արցախի եպիսկոպոս և տեսուչ, տեսնում հայ Առաքելական եկեղեցու և «Ամարասի» համագործակցությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ— Նախ և առաջ ես կշնորհավորեմ և կողջունեմ բարեգործական ընկերության ծնունդը և հաստատումը Արցախ աշխարհում: Եվ պետք է ասեմ, որ բարեգործությունը, բարեպաշտությունը, գթությունը միշտ հարազատ և բնորոշ են եղել հայ եկեղեցուն, և մեզ համար ուրախալի է, որ այդ ընկերությունը ծնվեց Արցախ աշխարհում: Բնական է, որ «Ամարաս» բարեգործական ընկերությունը և հայ Առաքելական եկեղեցին պետք է թև-թևի տված համագործակցեն: Այսինքն՝ և եկեղեցու, և բարեգործականի նպատակները նույնն են՝ հոգ տանել հիվանդների, դժվար կացության մեջ գտնվող հայերի մասին, միշտ օգնության հասնել մարդկանց, հիվանդներին, կարիքավորներին: Եվ ճանաչ է, որ մենք պիտի համագործակցենք թե՛ նյութական առումով, թե՛ մխիթարական խոսքով: Մենք պետք է ի նպաստ դնենք մեր բոլոր կարողությունները, որպեսզի ամենաշատ կերպով ծաղկի և բարգավաճի մեր լեռնաշխարհը: Մենք չափան կենք շատ ունենք, փաստորեն նրանք նույնն են: Ինձ թվում է, որ եկեղեցու և բարեգործականի համագործակցությունը հաջողությամբ կպսակվի: Այդ գործը բարի է, ազնիվ է և սրբազան:

ՀԱՐՑ— Տասնամյակներ շարունակ կտրված լինելով մայր Հայաստանից, Արցախի ժողովուրդը, բնականաբար, գրեթե ոչինչ չգիտի Ս. Էջմիածնի և Կիլիկյան աթոռի հարաբերությունների մասին: Ի՞նչ կարող եք ասել դրա մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ— Պետք է ասեմ, որ Կիլիկյան կաթողիկոսությունը առնդժվել է 1441 թվականին: Կազմել է հայ Առաքելական եկեղեցու մի մասը, որը որպես գերադաս միշտ ճանաչել է Ամենայն հայոց կաթողիկոսին: Ըստ երևույթին, մենք ծանոթ են այն տխուր դեպքերին, որոնք տեղի են ունեցել 1956 թ., որի պատճառով առաջացին կապերը Կիլիկյան աթոռի և Մայր աթոռի միջև:

ՀԱՐՑ— Դուք նկատի ունե՞ք դաշնակցության ակտիվ գործունեությո՞ւնը այդ ոլորտում: Այդ կերպ է բացատրում խորհրդային մամուլը...

ՊԱՏԱՍԽԱՆ— Խորհրդային մամուլը, անշուշտ, իրավունք ունի այնպես ներկայացնելու, ինչպես ինքն է հարմար գտնում, ինչպես ինքն է ընկալում այդ հարցը: Ես, իբրև հայ եկեղեցու եպիսկոպոս, իբրև հոգևորական, հետևյալ պատասխանը կտամ: Ըստ երևույթին, և Կիլիկյան աթոռի միաբանները և Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբանները միգուցե ինչ-որ տեղ քիչ էին աղոթում, որպեսզի այդ պիսի առաջացում չլիներ: Գիտեք ինչ, ամբողջ հայ ժողովուրդը և եկեղեցու բոլոր Սրբազան աթոռների միաբանները պետք է միշտ ջերմորեն աղոթեն, որ միասնականությունը բոլոր ոլորտներում պահպանվի: Ինչ-որ տեղ մենք թերացանք, բույլ գտնվեցինք, արթուն չմնացինք, անդադար աղոթք չարեցինք, և այդ առաջացումը տեղի ունեցավ: Բայց, բարեբախտաբար, վերջերս Ռուս եկեղեցու 1000-ամյակի կապակցությամբ Մոսկվայում պատմական հանդիպում տեղի ունեցավ մեր երկու պատրիարքների՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի և Կիլիկյան աթոռի կաթողիկոս Գարեգին Երկրորդի միջև:

Երկրաշարժից՝ այդ տխուր դեպքից հետո Ս. Էջմիածին այցելեց Կիլիկյան կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Եվ ես պետք է ասեմ, որ այս մոտեցման հարցում նաև շատ մեծ դեր կատարեց մեր դարաբաղյան շարժումը: Հայտնի է, որ ղարաբաղյան շարժումը հիմք է ամբողջ հայության միաբանությանը:

ՀԱՐՑ— Ուրեմն հուսանք, որ մոտ ապագայում երկու Աթոռների հարաբերությունները կրճանկանան վեն:

ՊԱՏԱՍԽԱՆ— Եվ կհուսանք, և կաղոթենք, և հավատում ենք: Այդպես էլ պետք է լինի, քանզի մեր ազգը փոքր է, բազմաչարչար, և մենք իրավունք չունենք չլատված լինելու ոչ մի ասպարեզում: Մենք միշտ պետք է լինենք միաբան, որովհետև մեր ժողովուրդը ունի մի լավ ասացվածք. «Դեղ կանգնի՝ գերան կկոտրի»: Այսինքն՝ եթե միասնական լինենք ամեն մի ոլորտում (եկեղեցի, քաղաքական իշխանություն, ժողովուրդ, մշակույթի ներկայացուցիչներ), թե սփյուռքում, թե հայրենիքում, թե Արցախում, թե այլ հանրապետություններում, դա կնշանակի, որ մեր հայ ազգը մի ազգ է, մի շունչ, մի ոգի, ունի մի հավատք և մի հայրենիք... Դա բոլոր հայերի ցանկությունն է: